ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 126-Ա

«26» ՄԱՅԻՍ 2022Թ.

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով, 220-րդ և 222-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածի 30-րդ կետով և 31-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից 2022 թվականի մայիսի 5-ին ներկայացրած գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի մայիսի 4-ին անձնական պատճառներով աշխատավայրից «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Բաբայանի բացակայելու պատճառով աշխատանքները ոչ ճիշտ կազմակերպելու դեպքը և դրա հետևանքները քննելու նպատակով հարուցել կարգապահական վարույթ:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

5/26/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր